ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի մասին

ք. Մարտունի «13» «նոյեմբերի» 2025թ.
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Արտյոմ Քոչարյան

Անդամներ՝ Վահան Թամոյան, Թաթուլ Դավթյան,
Բորիս Գասպարյան, Սահակ Աբրոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Էդվին Գրիգորյան

1. **ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 11.11.2025թ թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**

1.Պարզաբանման պահանջի տեքստ

Պարզաբանման խնդրանք

Համաձայն 16.12.2006թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Համաձայն 16.12.2006թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ,5-րդ և 6-րդ կետերի

4. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

5. Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր փվյալների համապատասխանության ապահովման շրջանակում մասնակիցը, անհրաժեշտության դեպքում կարող է հիմնվել այլ անձանց ֆինանսական և տեխնիկական միջոցների վրա՝ համապատասխան պայմանագրով սահմանված իրավահարաբերության հիման վրա:

6. Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Հրավերի 2.4 կետի համաձայն մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) աշխատանքային ռեսուրսներ,

4) օրենքով սահմանված լիցենզիա և համապատասխան ներդիր:

Մասնագիտական փորձառությանը ներկայացվող պահանջներ բաժնում առկա է հետևյալ պահանջը

Եթե մասնակիցը մասնակցելու է համատեղ գործունեությամբ (կոնսորցիումով), ապա պարտադիր պայման է, որ նմանատիպ պայմանագիրն ունենա այն ընկերությունը, ով հայտ ներկայացնելու և կատարելու է աշխատանքները և ում հետ կնքվելու ու վարվելու է պայմանագիրը:

Խնդրում ենք պարզաբանել հետևյալ պահանջի իրավական հիմքերը, եթե այն ակնհայտ խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջները:

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի

կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տարեթիվը և տիպը	Պահանջվող քանակը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը*,	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը**	Պահանջվող փաստաթղթերը և դրանց ներկայացվող պայմանները***
1	Ասֆալտփռիչ	ցանկացած	2 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
2	Ավտոգրեյդեր	ցանկացած	3 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
3	Էքսկավատոր	ցանկացած	4 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
4	Գլդոն	ցանկացած	4 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
5	Էքսկավատոր բեռնիչ	ցանկացած	2 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
6	Բարձիչ (բեռնիչ)	ցանկացած	2 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
7	Բուլդոզեր	ցանկացա	2 հատ	Լրացվում է	Լրացվում է	Տեխնիկական միջոցի

		ծ		մասնակցի կողմից	մասնակցի կողմից	նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
8	Քարշակ	ցանկացած	3 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
9	Բեռնատար ինքնաթափ	ցանկացած	5 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
10	Կիսակցորդ ինքնաթափ	ցանկացած	2 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
11	Կիսակցորդ հարթակ	ցանկացած	1 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/
12	Ուղևորատար ավտոմեքենա	ցանկացած	1 հատ	Լրացվում է մասնակցի կողմից	Լրացվում է մասնակցի կողմից	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթեր/տեխնիկական անձնագրեր և այլն/

*Պարտադիր պայման է, սահմանվել որ բոլոր տեխնիկական միջոցների արտադրության տարեթվերը լինեն 2001 թվականից ու բարձր: 2001 թվականից ցածր արտադրության տարեթվով ներկայացված տեխնիկական միջոցները չեն ընդունվելու:

**Տեխնիկական միջոցները պարտադիր պետք է գրանցված լինեն տվյալ ընկերության հաշվեկշռում (վարձակալությամբ չեն ընդունվում) /անհրաժեշտության դեպքում մասնակցից կարող է պահանջվել Մարտունու համայնքապետարան ներկայացնել համապատասխան տեխնիկաների վկայականների իսկական տարբերակները, ինչպես նաև Պատվիրատուն կարող է տվյալ Ընկերության տեխնիկաների մշտադիտարկում կատարել:

***** Աշխատանքների մեկնարկից առաջ հաղթող մասնակցից պահանջվելու է տեղեկանք/հավաստում այն մասին, որ վերոնշյալ տեխնիկաները ներգրավված չլինեն այլ մրցույթներում, ինչպես նաև վարձակալությամբ տրամադրված չլինեն:**

Խնդրում ենք պարզաբանել հետևյալ պահանջների իրավական հիմքերը, եթե այն ակնհայտ խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջները:

3) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

N	Մասնագետների		
	որակավորումը	աշխատանքային փորձը	
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
1	Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ շինարար՝ առնվազն 1 հոգի	վերջին 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ	Լրացնում է մասնակիցը

2	Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ շինարար՝ առնվազն 1 հոգի	վերջին 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ	Լրացնում է մասնակիցը
3	Գեոդեզիստ	վերջին 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ	Լրացնում է մասնակիցը

ՀՀ կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի համաձայն Շինարարության կազմակերպման նախագծի կազմում ընդգրկվում են շինարարությունում աշխատուժի, հիմնական շինարարական մեքենա-մեխանիզմների, տրանսպորտային միջոցների հիմնավորումը:

Հայտնում ենք, որ հրավերով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերում ՀՀ կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանով նախատեսված հիմնավորումները բացակայում էին:

Հաշվի առնելով վերոնշյալը խնդրում ենք պարզաբանել նախագծային փաստաթղթերից վերոնշյալ հիմնավորումների բացակայությունը:

Մասնակիցներից պահանջվում է նախատեսված գործունեության՝ օրենքով սահմանված լիցենզիա և համապատասխան ներդիր» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

«Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2106-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված փաստաթղթերի փաթեթ և աշխատանքների կատարման ողջ ընթացքում պետք է ունենա նշված որոշմամբ սահմանված փաստաթղթերի փաթեթը՝ համաձայն հետևյալ աղյուսակի:

Չափաբաժի ների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	Շինարարության իրականացում, 1-ին դասի լիցենզիա, ներդիրով /Տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն)/
1	Շինարարության իրականացում, 1-ին դասի լիցենզիա, ներդիրով Ջրամատակարարում և ջրահեռացում /Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա/

Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցը:

Հրավերով նախատեսված աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունները իրականացրել է «Արմ դոր ստրոյ» ՍՊ ընկերությունը, որի համապատասխան լիցենզիան ունի 2-րդ դաս:

Աշխատանքները ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի կողմից դասակարգվել են որպես 3-րդ ռիսկայնության աստիճանի օբյեկտներ:

Ինչ սկզբունքով նախագծող կազմակերպությունը 2-րդ դասի լիցենզիայով պատրաստել նախագծանախահաշվային փաստաթղթերը և ինչ սկզբունքով է կապալառու կազմակերպությունից պահանջվում 1-ին դասի լիցենզիա:

Խնդրում ենք պարզաբանել համարժեք են արդյոք պահանջվող լիցենզիայի դասը և շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանը և եթե համարժեք են ապա ինչ սկզբունքներով է որոշվել դրանց համարժեքությունը:

Խնդրում ենք պարզբանել

Հրավերով առկա նախագծային փաստաթղթերում առկա են ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ու երկաթուղագծերի, ինչպես նաև դրանց մաս հանդիսացող արհեստական կառույցների (թունելներ, կամուրջներ և այլն) վերակառուցման և (կամ) հիմնանորոգման նախագծային փաստաթղթեր թե ոչ:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Հարգելի մասնակից.

1. Ըստ ՀՀ կառավարության 13 մարտի 2025 թվականի N 277-Ն որոշմանը, գնումների կազմակերպման գործընթացի կարգում (ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 17 թիվ 526-ն որոշում) կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես՝ կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «Ժ» պարբերությամբ սահմանվել է, որ «Պատվիրատուն կարող է տվյալ գնման ընթացակարգի շրջանակում պատասխանատու ստորաբաժանման պատճառաբանված որոշմամբ կիրառել որակավորման չափանիշներ, վերջինիս ներկայացվող պահանջները և դրանց գնահատման կարգը սահմանվում են պատվիրատուի կողմից:

2. ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4.1 կետով մասնակցին ներկայացվող «Մասնագիտական փորձառություն» և «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշները չեն խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները և Մասնակիցը կարող է հիմնվել այլ անձանց ֆինանսական և տեխնիկական միջոցների վրա՝ համապատասխան պայմանագրով սահմանված իրավահարաբերության հիման վրա:

3. Նախագծանախահաշվային փաստաթղթերն օրենքով սամանված կարգով համապատասխան լիցենզիա ունեցող փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից անցել են համապատասխան փորձաքննություն և ստացել դրական եզրակացություն:

4. Նախագծման լիցենզիան և կատարող շինարարության լիցենզիան իրար չեն փոխարինում: Դրանք տարբեր տիպի գործունեություններ են, հետևաբար՝ կան տարբեր որակավորման շեմեր: Նախագծող ընկերությունը տալիս է տեխնիկական լուծում և դիզայն, բայց չի կրում շինարարության որակի և երկարաժամկետ շահագործման համար պատասխանատվություն: Ճանապարհաշինական և ասֆալտապատման շինարարական աշխատանքները ՀՀ նորմատիվների համաձայն դասվում են բարձր պատասխանատվության շինաշխատանքների շարքում, որոնք ներառում են ճանապարհային կառուցվածքի հիմքի ամրության, շերտերի խտության, տրանսպորտային ծանրաբեռնվածության հաշվարկի և երկարաժամկետ շահագործման ապահովման պատասխանատվություն: Մրցույթով հայտարարված բոլոր ճանապարհները գրունտային են, այսինքն վերակառուցվում են և ունեն ավելի բարձր ռիսկայնության աստիճան:

Ելնելով վերոգրյալից, մասնակցից պահանջվում է միայն 1-ին դասի լիցենզիա, քանի որ 1-ին դասի լիցենզիան է ապահովում պահանջվող ինժեներա-տեխնիկական անձնակազմի, փորձի, մեքենա-մեխանիզմների և տեխնիկական հագեցվածության բավարար մակարդակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Նախագահ՝ _____ Արտյոմ Քոչարյան

Անդամներ _____ Վահան Թամոյան

_____ Թաթուլ Դավթյան

_____ Սահակ Աբրոյան

_____ Բորիս Գասպարյան

Քարտուղար՝ _____ Էդվին Գրիգորյան